Աթոռ

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Տղաները ատաղձագործության խմբակում սովորում են աթոռ պատրաստել: Ավելի ճիշտ, նրանք փորձում են տաբուրետ պատրաստել: Նրանք չորս ոտքերը պատրաստել և հղկել են, հիմա ցանկանում են այդ չորս ոտքերն իրար մոտ դնել, և, եթե նրանց երկարությունները հավասար չեն, կտրեն և հավասարեցնեն: Նրանք ուզում են, որքան հնարավոր է, քիչ կտրել, ակնհայտ է, որ առնվազն ոտքերից մեկը չեն կտրելու:

Օգնեք ատաղձագործության խմբակ տղաներին պարզելու, թե որքան կլինի տաբուրետի ոտքերի կտրված ավելորդ մասերի ընդհանուր երկարությունը:

Մուտքային տվյալներ

Տրված են 4 բնական թվեր, որոնք չեն գերազանցում 100-ը:

Ելքային տվյալներ

Հարկավոր է արտածել մեկ թիվ՝ ավելորդ կտորների գումարային մինիմալ երկարությունը:

Օրինակներ

Մուտք	**Ելք**
10 20 30 40	60
10 10 10 10	0